

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խոստովանութիւնը Աստուծոյ կողմէ մեզի արուած մեծ բարիք եւ պարզեւ, նաեւ հոգիի կենդանութիւն եւ բժշկութիւն է: Շատեր տգիտութեան հետեւանքով յիմարաբար կորսուած են մեղքերու մէջ եւ զրկած են իրենց անձերը խոստովանութեան չնորհքն: Բազմաթիւ են անոնք որոնք առանց խոստովանութեան ու հաղորդութեան կը մնան: Ոմանք, որովհետեւ չեն գիտեր խոստովանութեան չնորհքն ու բարիքը, ուրիշներ՝ ամչնալուն եւ վախնալուն համար չեն խոստովանիր, իսկ ուրիշներ, որովհետեւ ընկղմած ու կորսուած են մեղքերու մէջ՝ չեն ուզեր ազատիլ սատանայի ծառայութենէն:

Արդ, մի անգիտանաք: Խոստովանութիւնը բժշկութիւն է հոգիներու համար, վախուսա է դժոխքն, ազատութիւն է սատանայէն եւ յարութիւն է մահէն: Հետեւաբար, կը պատուիրենք, որ ամէն կիրակի եկեղեցւոյ դուռը երթաք եւ խոստովանիք: Քահանային ներկայութեան ձեր ունեցած փոքր վախով ու ամօթով կը փրկուիք այն մեծ ամօթէն, որ տիեզերական աւել հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ: Այն մեծ կիրակին որ անփոխարինելի է, երբ մարդոց բոլոր ծածուկ ու գաղտնի գործերը պիտի յայտնուին:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Պատրաստ բաներ կան բայց պատրաստակամութիւն չկայ

Շատերուն մօտ շատ պատրաստ բաներ կան, ինչպէս օրինակ՝ պարզեւներ, ձիրքեր, կարողութիւններ, շնորհներ, բայց այս բոլորը ուրիշին օգուտին համար գործածելու պատրաստակամութիւն չկայ: Շատերուն մօտ դրամը չի պակսիր, բայց զանիկա Աստուծոյ փառքին եւ մարդուն բարիքին համար օգտագործելու պատրաստակամութիւնը կը պակսի: Ան որ կը կարծէ, թէ պատրաստ բաներ չունի եւ թէ ամէն բանէ զուրկ է՝ չարաչար կը սխալի: Ժափութ մըն ալ չունիս չորս կողմդ տարածելիք: Անոյշ խօսք մըն ալ չունիս գոտեպնդող: Աստուծոյ համար կարեւոր պատրաստակամ եւ յօժարակամ ըլլալդ է եւ ո՞չ թէ ունեցած «պատրաստ բաներդ»: Եթէ պատրաստ ու յօժար ես դուն քեզ դնելու Աստուծոյ տրամադրութեան ներքեւ, այն ատեն միայն պիտի տեսնես, թէ ինչե՞ր ունեիր որ ուշադրութենէդ վրիպած էին:

Սիրելի ընթերցող, ՁՐԱԳ թերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաև՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐՁ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - facebook-h.kz/jerak ՃՐԱԳ թերք

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՏՐԱԳ Է ՈՒ ԻՄ ՇԱՀԻՆԵՐՈՒՄ ԼՈՅ
(Ա.119.105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, ՅՈ ԴԵԿԵՄԵՆՏ 2018

ԹԻՒ 52

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒՆԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես.51.15-52: Եֆր. 13.18-25:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՆԸ ԸՆՏ ԴՈՒԿԱՍՈՒ 22.24-30

Աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ, թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ. «Ազգերու թագաւորները կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդ՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը: Սեղան բազմո՞ղը, թէ սպասաւորը: Անշուշտ որ սեղան բազմո՞ղը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններուն ընթացքին, եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզ, ինչպէս հայրս ինծի տալ խոստացաւ: Իմ թագաւորութեանս մէջ իմ սեղանէս պիտի ուտէք ու խմէք եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար հսրայէլի տասներկու ցեղերը:

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԿԸ ՓՈԽԵ ՄԵՐ ԿԵՍՆՔԸ

Կը պատմուի, թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձեալ կու գայ եւ ինքինի կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտէզի մը մէջ նստած երբ Սուրբ Գիրք կը կարդար, ամերիկացի մը կը տեսնէ զինիք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դուն, ո՞վ ափրիկեցի, դո՞ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ ափրիկեցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ նաշ եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կընայ փոխել մարդուն կեանին ու նկարագիրը: Անիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ճԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

13.18-25

Աղօթեցէք մեզի համար, որովհետեւ համոզուած ենք, թէ մեր խիդնը մաքուր է, եւ կ'ուզենք ամէն բանի մէջ ուղիղը գործել: Մանաւանդ կ'աղաչեմ, որ աղօթէք ինձի համար, որպէսզի կարենամ աւելի շուտ ձեզի վերադառնալ:

Թող խաղաղութեան Աստուածը ձեզի կարողութիւն տայ ամէն տեսակի բարեգործութեամբ իր կամքը կատարելու, որովհետեւ ինքն էր որ մեռելներէն յարուցանց մեր Տէր Յիսուս Քրիստոսը, ան՝ որ իր արիւնով կնքուած յալիտենական ուխտով Հովուապետ եղաւ ամբողջ հօտին: Թող ինչ որ հանելի է Աստուծոյ՝ ներգործէ մեր մէջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ, որուն փա՛ռք յալիտեանս: Ամէն:

Եղբայրներ, կ'աղաչեմ, որ լսէք այս կարեն նամակով տուած յորդորներս: Կ'ուզեմ, որ գիտնաք թէ մեր եղբայրը՝ Տիմոթէոս բանտէն արձակած է հիմա: Եթէ շուտով մօսս գայ, միասին կուգանք ձեզ տեսնելու:

Ողջոյններս հաղորդեցէ՛ք ձեր բոլոր առաջնորդներուն եւ բոլոր հաւատացեաններուն: Խտալիոյ եղբայրները կ'ողջուննեն ձեզ:

Աստուծոյ շնորհքը բոլորիդ հետ ըլլայ: Ամէն:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ ՆԱՐԵԿ ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆԵՆ

Ա- Սրտիս հեծեծալից հառաչանքներուն ողբաձայն աղաղակը բեզի կը վերընծայեմ, ո'վ գաղտնիքները տեսնող Տէր, եւ այրուող հոգիս թախծութեան կրակին վրայ դնելով սասանած մտքիս նեներող իղձերուն պտուղը, կամքիս բուրվառովը Քեզի կը ձօնեմ զայն: Գթա՛ծ, իին օրէնքի ողջակէզին թանձրածուխ զոհէն աւելի, իմ այս պատարագի՛ս նայէ, եւ հոտոտէ զայն: Հանութեամբ եւ ոչ թէ բարկութեամբ ընդունէ այս սակաւաման խօսքերուն հիսուտածքը: Բանական զոհ մըն եմ ես. հոգիս խորհրդակիր սենեակին զգայութեանց խորքէն ելած կամաւոր նուէրը թող շուտով հասնի բեզի, մերերուս պարարտութեան նարպին միջոցաւ ողջակիզուելով: Անձիս համար այսպէս աղերսանքով բեզի հետ դատի մտնելս թող տաղտկալի չքուի Քեզի, Հզօր, ինչպէս ամբարշտած Խորայէլին ձեռներուն բարձրանալը, որուն կ'ակնարկէ Եսայի, կամ ինչպէս Բարելոնի անիրաւութիւնը, զոր կը հասկցնէ եռանասուն եւ երկրորդ Սաղմոսին, այլ թող անիկա Քեզի ընդունելի ըլլայ ինչպէս այն անուշ խունկը, որ բուրեց Սելովի խորանին մէջ, որուն նման մը նորակերտեց Դաւիթ, անոր մէջ հանգչեցնելու համար գերութեանէն դարձած տապանակը, որ պատկերն է կորսուած երուսաղէմի Հայոց Ս. Յակոբեանց հիանալի եկեղեցին:

Յովիաննէս կ'աղաչեմ, որ լսէք այս կարեն նամակով տուած յորդորներս: Կ'ուզեմ, որ գիտնաք թէ մեր եղբայրը՝ Տիմոթէոս բանտէն արձակած է հիմա: Եթէ շուտով մօսս գայ, միասին կուգանք ձեզ տեսնելու:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՄՐԲՈՅ ՈՐԴԻՈՅՆ ՈՐՈՏՄԱՆ՝ ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒԻ ԱԻԵՏԱՐԱՆՁԻՆ Յակոբոս Առաքեալ

Զերեղիոսի եւ Սողոմէի որդին՝ Յակոբոս, իր եղբօրը Յովհաննէսի եւ Պետրոսի հետ կը կազմէին այն սեղմ շրջանակը, որու աւելիով կը վստահէր Քրիստոս:

Յակոբոս եւ Յովհաննէս իրենց ըմբոստ նկարագիրին համար Քրիստոսի կողմէ կոչուեցան «Որդիք Որոտման»:

Յակոբոս առաքեալի նահատակութեան կ'անդրադառնայ միայն Գործք Առաքելոց գիրքը, երբ կը պատմէ թէ Հերովդէս ձերբակալելով կը գլխատէ զայն՝ շուրջ 99 թուականին Երուսաղէմի մէջ:

Յակոբոս կը հանդիսանայ առաջին նահատակը առաքեալներու խումբին: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ իր մարմինը կը նետուի Եաֆայի ծովը եւ ալիքները զայն կը հանեն Սպանիոյ ծովեղերքը, ուր մեծ ժողովրդականութիւն կ'ունենայ: Իսկ անոր գլուխը կը տարուի Յակոբոս Տեառնեղբայր առաքեալին, որ կը թաղէ զայն իր պարտէզին մէջ, որու վրայ ապագային կը կառուցուի Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբեանց հիանալի եկեղեցին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼ

Առաքեալներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքեալն է Յովհաննէս, որ նաեւ ճանչցուած է «Սիրելի Աշակերտ» անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի եռամեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ, եւ նոյնիսկ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախնալով կը լքեն զՔրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր Համելով մինչեւ Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի խնամքին եւ այդպիսով կ'աւանդէ իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սքանչելի աւետարանով՝ «Աւետարան Հստ Յովհաննու»: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա աքսորեալ կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են «Յայտնութիւն Յովհաննու» գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելաղրէ կեանքը ապրիլ ճշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ ընական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ 100 թուականին Քրիստոսի:

Ա.Ի.Ա.Կ.ՆԵՐ Գլուխ Բ. 1-2

Որդեական, եթէ իմ պատուիրաններս հոգւոյդ մէջ պահես եւ գործադրես զանոնք, ունկնդիր պիտի դառնաս իմաստութեան, սիրտդ գիտութեամբ պիտի հարստացնես եւ զանոնք որպէս խրատ՝ աւանդես զաւկիդ: